

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Մաշտոցյան Ռաֆիկ Գագիկի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ընդհանուր բնութագիր: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից (95 անուն) և հավելվածներից: Ընդհանուր ծավալը՝ հավելվածներով, կազմում է 170 էջ: Աշխատանքը պարունակում է 28 աղյուսակ, 35 գծապատկեր և մի շարք մաթեմատիկական մոդելներ: Տեքստը գրագետ է, ոճը՝ գիտական, կառուցվածքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին: Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է և համահունչ հետազոտության նպատակներին ու խնդիրներին:

Թեմայի արդիականությունը: Թեման բարձր արդիականություն ունի: Արդի տնտեսական պայմաններում կազմակերպությունների խմբերի կառավարումը պահանջում է ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ինտեգրված մոդելավորում: Հեղինակը ճիշտ է ընդգծում դասական մոտեցումների սահմանափակումները և ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (ՑՀՀ) կազմակերպությունների խմբերին հարմարեցման անհրաժեշտությունը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Առաջին գլխում («Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի տեսամեթոդական հիմքերը կազմակերպությունների խմբի կառավարման համատեքստում») ներկայացվում են ՑՀՀ-ի տեսական հիմքերը, վերլուծվում են կազմակերպությունների խմբի ռազմավարական կառավարման առանձնահատկությունները և ՀՀ-ում առկա հիմնախնդիրները: Առանձնահատուկ արժեքավոր է 1.3 ենթաբաժինը, որտեղ իրականացվում է ՀՀ-ում կազմակերպությունների խմբերի կառավարման հիմնախնդիրների խորը վերլուծություն՝ բացահայտելով իրավական, ինստիտուցիոնալ և կառավարչական սահմանափակումները:

Երկրորդ գլխում («Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորումը ՑՀՀ հիման վրա») ներկայացվում է մեթոդաբանությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի ՑՀՀ կառուցվածքի հարմարեցումը կազմակերպությունների խմբի առանձնահատկություններին (2.1 ենթաբաժին)՝ ընդգրկելով կորպորատիվ, դուստր կազմակերպությունների և գործառնական մակարդակները: Ֆինանսական բաղադրիչի մոդելավորման համար կիրառվում է մեթոդների լայն սպեկտր՝ Դյուպոնի վերլուծություն, ժամանակային շարքերի սպեկտրալ վերլուծություն, Ֆուրյեի շարքեր, Թեյլի անհավասարության գործակից և VAR մոդելավորում, ինչը հնարավորություն է տալիս գնահատել ինչպես ցուցանիշների կառուցվածքային գործոնները, այնպես էլ դրանց դինամիկ և պարբերական վարքագիծը:

Երրորդ գլխում («Հ կազմակերպությունների խմբի ցուցանիշների հաշվեկշռված համակարգը») իրականացվում է առաջարկված մոտեցումների կիրառական փորձարկումը՝ կոնկրետ թվային արդյունքներով (ROE վերլուծություն, էլեկտրաէներգիայի վաճառքի ժամանակային շարքի պարբերականություններ, NER

մոդելի $F1=0.69$, արտարժույթային հոսքերի օպտիմիզացում և այլն): Այս գլուխը ցույց է տալիս մեթոդների գործնական կիրառելիությունը իրական տվյալների վրա:

Գիտական նորույթի և արդյունքների գնահատում: Ատենախոսության գիտական նորույթը կազմակերպությունների խմբի համար ՑՀՀ-ի հիման վրա ինտեգրված բազմամակարդակ մոդելավորման մոտեցման մշակման մեջ է: Հեղինակը հաջողությամբ համադրել է ռազմավարական կառավարման տրամաբանությունը տնտեսագիտամաթեմատիկական գործիքների հետ (Դյուպոն, սպեկտրալ վերլուծություն, VAR, NLP/NER, Մոնտե-Կառլո): Այս արդյունքները համեմատաբար նոր են հայաստանյան գիտության համար և զարգացնում են Kaplan-ի և Norton-ի դասական մոտեցումը:

Հիմնական նորություններից են՝

- Բազմամակարդակ ՑՀՀ կառուցվածքի առաջարկը՝ ռազմավարական նպատակների դեկոմպոզիցիայով խմբի, դուստր կազմակերպությունների և գործառնական մակարդակներում.
- Ֆինանսական և գործառնական ցուցանիշների ինտեգրված, դինամիկ մոդելավորումը (Դյուպոն, ժամանակային շարքեր, սպեկտրալ վերլուծություն, VAR).
- NLP/NER մոտեցման կիրառումը նյութերի անվանումների ստանդարտացման համար (17 258 անվանում).
- Արտարժույթային հոսքերի կենտրոնացված կառավարման և ներխաժային հաշվանցման մոդելը (49 կազմակերպություն, 2100 գործարք, արտաքին փոխարկումների նվազեցում՝ շուրջ 9,38 մլրդ դրամով).
- Քաղաքական ռիսկի սցենարային մոդելավորումը և թվայնացման ազդեցության վերլուծությունը աշխատակիցների բավարարվածության և մոտիվացիայի վրա.

Մեթոդաբանական առավելություններ: Ատենախոսության մեթոդաբանական առավելություններից են՝ մեթոդների համալիր կիրառումը, որոնք փոխլրացնում են միմյանց և ապահովում ավելի ամբողջական պատկեր. քանակական (ռեգրեսիոն վերլուծություն, ժամանակային շարքեր, սիմուլյացիա) և որակական (հարցաթերթիկային հետազոտություն, փորձագիտական գնահատում) մոտեցումների ինտեգրումը. տվյալների բազմազանությունը (ֆինանսական, գործառնական, տեքստային, արտարժույթային, հարցաթերթիկային). ինչպես նաև ժամանակակից գործիքների (NLP, մեքենայական ուսուցում, Մոնտե-Կառլո, VAR) կիրառումը, որը վկայում է հեղինակի ժամանակակից մեթոդներին տիրապետելու մասին:

Գործնական նշանակություն: Ստացված արդյունքները կիրառելի են խոշոր կազմակերպությունների խմբերի ռազմավարական պլանավորման, կենտրոնացված գնումների, գանձապետական կառավարման և ռիսկերի գնահատման մեջ: Մասնավորապես՝ Դյուպոնի վերլուծության և ժամանակային շարքերի մոդելավորման համադրությունը թույլ է տալիս բացահայտել շահութաբերության աճի գործոնները. էլեկտրաէներգիայի վաճառքի և նյութերի նույնականացման NLP մոտեցումը կիրառելի է պլանավորման և ծախսերի վերահսկման համար. կենտրոնացված արտարժույթային կառավարման մեխանիզմը կարող է էապես նվազեցնել փոխարկման ծախսերն ու արժույթային ռիսկերը. իսկ թվայնացման ազդեցության վերլուծությունը ցույց է տալիս

մարդկային գործոնի հաշվառման անհրաժեշտությունը տեխնոլոգիական փոփոխությունների ներդրման ժամանակ:

Թերություններ և դիտողություններ: Չնայած ատենախոսության ընդհանուր բարձր մակարդակին, առկա են հետևյալ թերությունները, որոնց համար առաջարկվում են կոնկրետ լուծումներ.

1. Մոդելների ռոբուստության ստուգումների անբավարար խորություն, հատկապես VAR մոդելավորման բաժնում (2.3.3), որը տեսականորեն հիմնավորված է, սակայն գուրկ է գործնական արդյունքներից Z խմբի տվյալների վրա:
2. Համեմատական և արտաքին վավերացման սահմանափակություն: Աշխատանքում բացակայում է առաջարկվող մոտեցումների համեմատությունը այլընտրանքային մեթոդների հետ: Բացի այդ, մոդելները փորձարկված են միայն մեկ կազմակերպությունների խմբի տվյալների վրա: Առաջարկվում է կիրառել panel data regression, ինչպես նաև ապագա հետազոտություններում փորձարկել մոդելները տարբեր ոլորտներում և երկրներում գործող խմբերի վրա:
3. Քաղաքական ռիսկի մոդելի որոշակի պարզեցում (2.3.5, 3.4.1): Մոդելը հիմնված է մեկ ժամանակահատվածի, երկու վիճակներով սխեմայի վրա, ինչը թեև տալիս է արժեքավոր պատկերացումներ, այնուամենայնիվ հաշվի չի առնում ռազմավարության հարմարվողական բնույթը:
4. Տվյալների որակի և ինտեգրման գործնական խոչընդոտների անբավարար վերլուծություն: Աշխատանքում քիչ ուշադրություն է դարձված տվյալների որակի ապահովման և տարբեր աղբյուրների ինտեգրման գործնական դժվարություններին: Առաջարկվում է ներառել Data Quality Framework մոդել (DAMA-DMBOK ստանդարտի հիման վրա) և Master Data Management համակարգի առաջարկություններ, ինչպես նաև կիրառել ETL գործընթացների օպտիմիզացում և data lineage վերլուծություն:
5. Սահմանափակ էմպիրիկ բազա և իրականացման ծրագրի բացակայություն: Ֆինանսական վերլուծության համար օգտագործվել է ընդամենը 36 ամսվա տվյալներ, իսկ թվայնացման ազդեցության ուսումնասիրության համար՝ 214 հարցաթերթիկ. երկուսն էլ սահմանափակում են արդյունքների ընդհանրացման հնարավորությունը: Բացի այդ, եզրակացություններն ունեն որոշակի ընդհանրացված բնույթ և գուրկ են կոնկրետ իրականացման ծրագրից:
6. Գրականության ցանկի արդիականացման անհրաժեշտություն: Օգտագործված գրականության ցանկը (95 անուն) հիմնականում ընդգրկում է դասական աշխատություններ (Kaplan, Norton, Chandler, Grant): Ցանկալի կլինեք ավելի շատ հղումներ վերջին հինգ տարիների միջազգային հրապարակումներին:

Եզրակացություն

Մաշտոյան Ռաֆիկ Գազիկի ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն և գիտականորեն արժեքավոր հետազոտություն է, որը նպաստում է կազմակերպությունների խմբերի կառավարման տեսության և պրակտիկայի զարգացմանը: Աշխատանքի հիմնական ուժեղ կողմերն են՝ արդիական թեմա, որը համապատասխանում է ժամանակակից տնտեսության մարտահրավերներին. համակողմանի մեթոդաբանություն, որը միավորում է տարբեր վերլուծական գործիքներ. գործնական կիրառելիություն ցույց տրված իրական տվյալների վրա.

գիտական նորույթ՝ դրսևորված ինչպես տեսական, այնպես էլ մեթոդական մակարդակում. և կառուցվածքային ամբողջականություն, որը ապահովում է հետազոտության տրամաբանական հաջորդականությունը: Վերոնշյալ դիտողությունները չեն նվազեցնում աշխատանքի գիտական և գործնական արժեքը, այլ ուղղված են դրա հետագա զարգացմանը:

Ռաֆիկ Գազիկի Մաշուրյանի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Հ.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Հ. Լ. Սարգսյան

Հ.Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու՝



Մ. Վ. Հովհաննիսյան

31.07.26թ.

